

| Մասնագիտության նկարագիրը | |
|--|---|
| Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը | Մասնագիտությունը՝ 0913.01.4 «Հիվանդի ընդհանուր խնամք», որակավորումը՝ 0913.01.01.4 «Կրտսեր բուժքույր/բուժեղբայր» |
| I. Դերը | Կրտսեր բուժքույրը իրականացնում է հիվանդների խնամք բուժասանիտարական և բուժասոցիալական օգնության սկզբնական համակարգում, տանը, Կարմիր խաչի գթասարտության ընկերությունում, մանկապարտեզներում և դպրոցներում |
| II. Խնդիրների բնագավառները | |
| Խնդիրների բնագավառ 1. Հիվանդասենյակի և պացիենտի տեղի նախապատրաստում | |
| Աշխատանքային գործընթացը | <ul style="list-style-type: none"> ➤ տեղանքի հիմնական և ընթացիկ մաքրում՝ տարբեր ախտահանիչ միջոցների կիրառմամբ, ➤ բուժվող հիվանդի անկողնու սպիտակեղենի փոխում, ➤ օգտագործած սպիտակեղենի հավաքում և հանձնում լվացքատուն, ➤ հիվանդի իրերի դասավորում՝ հարմար օգտագործման համար. ➤ հիվանդի խնամքի առարկաների ճիշտ օգտագործման և պահպանման ապահովում: |
| Կատարման չափանիշներ | <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում հիվանդասենյակի մաքրման կարգը՝ նախորդ հիվանդի դուրս գրվելուց հետո, ➤ ճիշտ է ներկայացնում և իրականացնում ախտանանիչ լուծույթների պատրաստման ձևերը և դրանց |

| | |
|---|---|
| | <p>օգտագործման կարգը,</p> <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում ախտահանիչ լուծույթներով ախտահանման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման միջոցները, ➤ ճիշտ է ներկայացնում անկողնային սպիտակեղենի փոխման կանոնները, իրականացնում դրանց հավաքման և լվացքատուն հանձման գործընթացը, ➤ ճիշտ է ներկայացնում և իրականացնում պացիենտի իրերի դասավորման գործընթացը՝ հարմար օգտագործման համար, ապահովում է դրանց պահպանումն ու ճիշտ օգտագործումը: |
| <p><u>Խնդիրների բնագավառ 2.</u> Բուժական կաբինետների և հիվանդի նախապատրաստում՝ բուժական գործողությունների կատարման համար</p> | |
| <p>Աշխատանքային գործընթացը</p> | <ul style="list-style-type: none"> ➤ Բուժական կաբինետների նախապատրաստման աշխատանքներում օժանդակություն, ➤ հիվանդի նախապատրաստում և ուղեկցում՝ բուժական գործողությունների ու հետազոտությունների կատարման համար, ➤ բոլոր տեսակի հոգնանների կատարում, ➤ բժշկական նշանակության առարկաների ախտահանում, ➤ Հիվանդների նախապատրաստում լաբորատոր եղանակով հետազոտության համար, ➤ քրտինքի, կղանքի, մեզի հավաքում՝ կլինիկական և մանրէաբանական հետազոտության համար: |

Կատարման չափանիշներ

- ճիշտ է ներկայացնում և իրականացնում նախնական հետազոտման և ախտորոշման կաբինետների նախապատրաստման ժամանակ կրտսեր բուժքրոջ գործողությունները .
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում ռենտգենոլոգիական, ուլտրաձայնային և էնդոսկոպիկ հետազոտման կաբինետների նախապատրաստման աշխատանքների ժամանակ կրտսեր բուժքրոջ գործողությունները,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում վերականգնողական թերապիայի բուժական կաբինետների նախապատրաստման ժամանակ կրտսեր բուժքրոջ գործողությունները,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում պացիենտին ռենտգենոլոգիական, ուլտրաձայնային և էնդոսկոպիկ հետազոտման համար նախապատրաստման գործընթացը,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում մտավոր խանգարումներով պացիենտին հետազոտման համար նախապատրաստման գործընթացը,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում անկողնային հիվանդին հետազոտման համար նախապատրաստման գործընթացը,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում բոլոր տեսակի հոգնանների կատարման գործողությունները,
- ճիշտ է ներկայացնում և իրականացնում բժշկական նշանակումների կատարման համար կիրառվող

| | |
|---|--|
| | <p>առարկաների նախնական ախտահանման գործընթացը,</p> <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում և իրականացնում կլինիկական և բոկտերիոլոգիական հետազոտման համար քրտինքի, կղանքի, մեզի հավաքման գործողությունները: |
| <p>Խնդիրների բնագավառ 3. Կրտսեր բուժքույրական խնամքի իրականացում</p> | |
| <p>Աշխատանքային գործընթացը</p> | <ul style="list-style-type: none"> ➤ Տարբեր հիվանդություններով հիվանդների նկատմամբ կրտսեր բուժքույրական խնամքի իրականացում, ➤ մասնակցություն ծանր հիվանդների տեղափոխմանը՝ հաշվի առնելով էրգոնոմիկայի կանոնները, ➤ մասնակցություն սննդի տեղ հասցմանը և ծանր հիվանդների կերակրմանը: |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում պացիենտի անձնական հիգիենայի պահպանման միջոցները, ➤ ճիշտ է ներկայացնում անկողնային հիվանդների խնամքի առանձնահատկությունները և իրականացնում կրտսեր բուժքույրական խնամք նրանց նկատմամբ, ➤ ճիշտ է ներկայացնում և իրականացնում ծանր հիվանդի տեղափոխման գործընթացը՝ հաշվի առնելով էրգոնոմիկայի կանոնները, ➤ ճիշտ է ներկայացնում ֆիզիկապես թույլ հիվանդների խնամքի առանձնահատկությունները և իրականացնում կրտսեր բուժքույրական խնամք նրանց նկատմամբ, ➤ ճիշտ է ներկայացնում խնամքի առանձնահատկությունները հոգեբուժարանում և իրականացնում կրտսեր բուժքույրական խնամք նրանց նկատմամբ, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում մաշկային և վարակիչ հիվանդություններով հիվանդների խնամքի առանձնահատկությունները և իրականացնում կրտսեր բուժքույրական խնամք նրանց նկատմամբ, ➤ ճիշտ է ներկայացնում սնուցման գործողությունը և դրա առանձնահատկությունները, կատարում է կերակրում, մասնակցում սննդի հիգիենիկ տեղ հասցմանը: |
| <p>Խնդիրների բնագավառ 4. Մասնակցություն նախաբժշկական օգնությանը, խնամքը գերիատրիայում և ամոքիչ խնամքի իրականացում</p> | |
| <p>Աշխատանքային գործընթացը</p> | <ul style="list-style-type: none"> ➤ նախաբժշկական օգնության ցուցաբերում պատահարների դեպքում: ➤ խնամքի իրականացում գերիատրիայում, ➤ ամոքիչ խնամքի իրականացում, հիվանդի սնուցման ապահովում, ➤ դիակի հետ վարվելու կանոնների պահպանում: |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ul style="list-style-type: none"> ➤ ճիշտ է ներկայացնում նախաբժշկական բուժօգնությունը և կրտսեր բուժքրոջ գործողությունները նախաբժշկական բուժօգնության ընթացքում, ➤ ճիշտ է ներկայացնում խնամքի առանձնահատկությունները գերիատրիայում և իրականացնում կրտսեր բուժքույրական խնամք, ➤ ճիշտ է ներկայացնում կլինիկական և կենսաբանական մահվան նշանները և իրականացնում ամոքիչ խնամք, ➤ ճիշտ է իրականացնում դիակի հետ վարվելու կանոնները: |

| | |
|---|---|
| <p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p> | <p>Կրտսեր բուժքույրը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> ➤ պացիենտի, շրջակա միջավայրի և անձնակազմի համար հիգիենիկ հիվանդանոցային միջավայր ապահովելու համար, ➤ տեղանքի հիմնական և ընթացիկ մաքրման ապահովման համար, ➤ նյութերի խնայողաբար օգտագործման համար, ➤ մասնագիտական պարտավորությունների պատշաճ կատարման համար: |
| <p>IV. Լեզուները</p> | <p>Հայերեն՝ գերազանց, Օտար լեզու՝ բավարար</p> |
| <p>V. Համակարգիչը</p> | <p>MS Word – բավարար Internet Explorer -բավարար</p> |
| <p>VI. Գիտելիքները</p> | <p>Մարդու օրգաններ- համակարգերի կառուցվածքը, ֆունկցիաները և տեղագրությունը,</p> <ul style="list-style-type: none"> ➤ օրգանիզմի կենսագործունեության հիմնական օրինաչափությունները, ➤ գաղափար հիվանդությունների մասին. ➤ տիպային ախտաբանական պրոցեսների զարգացման և ի հայտ գալու մեխանիզմները, ➤ մարդու առողջության վրա ազդող սանիտարահիգիենիկ և էկոլոգիական գործոնները, ➤ մանրէները և նրանց հիմնական խմբերը, նրանց տարածման ճանապարհները ու ազդեցությունը մարդու |

| | |
|--|---|
| | <p>օրգանիզմի վրա,</p> <ul style="list-style-type: none"> ➤ հիվանդի և անձնակազմի անվտանգության վրա ազդող գործոնները, ➤ ներհիվանդանոցային վարակների կանխարգելման հիմունքները, ➤ էրգոնոմիկայի կանոնները, ➤ տարբեր հիվանդություններով հիվանդների խնամքի առանձնահատկությունները, խնամքի միջոցները, ➤ անկողնային և անձնական սպիտակեղենի փոխման, դրա հավաքման կարգը, ➤ ախտահանիչ լուծույթների պատրաստման ձևը և դրանց օգտագործման կարգը, ➤ հիվանդին բուժախտորոշիչ միջոցառումներին նախապատրաստելու կարգը, ➤ պոլիատիվ խնամքի իրականացման կարգը: |
| <p>VII. Կարողությունները և հմտությունները</p> | <ul style="list-style-type: none"> ➤ անվտանգ հիվանդանոցային միջավայրի ապահովման կարողություն, ➤ ֆունկցիոնալ մահճակալի կիրառման հմտություն, հիվանդի դիրքի հարմարեցման կարողություն, ➤ ծանր հիվանդների տեղափոխման ժամանակ էրգոնոմիկայի կանոնների կիրառման հմտություն, ➤ ֆիզիկապես թույլ հիվանդների կերակրման հմտություն, ➤ հիվանդի խնամքի ժամանակ անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության |

| | |
|---|--|
| | <p>պահանջների ապահովման կարողություն,</p> <ul style="list-style-type: none"> ➤ մասնագիտական գործունեության ընթացքում մարդու օրգանիզմի կառուցվածքի և ֆիզիոլոգիական պրոցեսների մասին մասնագիտական գիտելիքների պրակտիկ կիրառման հմտություն, ➤ բուժախտորոշման միջոցառումների համար հիվանդին նախապատրաստելու կարողություն, ➤ պոլիատիվ խնամքի իրականացման կարողություն: |
| <p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p> | <p>Պարտաճանաչ, բանիմաց, մարդասեր, ազնիվ, մաքրասեր, քաղաքավարի</p> |